



-
- Visegrad Fund
-
-

ԵՐԱՇՏԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

2023 Մայիս


Բովանդակություն

<i>1. Ջերմաստիճանի ամսական շեղում.....</i>	<i>3</i>
<i>2. Տեղումների ամսական շեղում.....</i>	<i>3</i>
<i>3. Երաշտի ինտենսիվության ինդեքսներ:.....</i>	<i>4</i>
3.1 Բուսականության վիճակի ինդեքս (VCI)	4
3.2 Բուսականության նորմալացված տարբերության ինդեքս (NDVI).....	5
3.3 Գյուղատնտեսական սթրես ինդեքսը (ASI)	6
3.4 Օդերևութաբանական երաշտի ինտենսիվության գնահատումը	7


1. Ջերմաստիճանի ամսական շեղում

Մայիս ամսին օդի միջին ամսական ջերմաստիճանները գերազանցել են նորման (1981-2010թթ.): Հայաստանի 43 օդերևութաբանական կայանների փաստացի դիտարկումների համաձայն հիմնականում օդի միջին ամսական ջերմաստիճանները եղել են նորմայից բարձր: Առավելագույն շեղումներ գրանցվել են Արարատյան դաշտում, Վայոց Ձորում, Գեղարքունիքի հյուսիսային և Սյունիքի մարզի հարավային հատվածներում՝ մինչև 1-1,5°C: ERA5-Land գլոբալ ռեանալիզի միջին ամսական ջերմաստիճանների շեղումների քարտեզը բավականին լավ արտացոլում է մայիս ամսվա նորմայից բարձր ջերմաստիճանները Հայաստանի տարածքում:

Monthly Temperature anomalies Armenia
May 2023 (1981-2010 base period)




Monthly Temperature anomalies Armenia
May 2023 (1981-2010 base period), ERA5-Land




2. Տեղումների ամսական շեղում

Մայիսը ուղեկցվել է նորմային մոտ տեղումներով (մոտ 90%): Առավել խոնավ է եղել Հայաստանի հյուսիսային, արևելյան և հարավային շրջանները, որտեղ դիտվել է ապրիլ ամսվա տեղումների նորմայի ավելի քան 120%-ը, առավելագույն շեղումներ գրանցվել են Սյունիքում, Գեղարքունիքում, որտեղ գրանցվել է տեղումների նորմայի մոտ 130%-ը: Փաստացի դիտարկումները ցույց են տալիս, որ պայմանավորված Հայաստանի լեռնային ռելիեֆով, առանձին հատվածներում դիտվել են լոկալ բնույթի տեղումներ: Հայաստանի տարածքի կենտրոնական և արևմտյան շրջաններում տեղումների քանակը մայիսին մոտ է եղել նորմային (80-100%): Ի տարբերություն փաստացի դիտարկումների՝ ERA5-Land գլոբալ ռեանալիզի տեղումների քանակի տվյալները ցույց են տալիս, որ մայիսին Հայաստանի շրջանների մեծ մասում տեղումների քանակը եղել է նորմայից պակաս: Հանրապետության մեծ մասում դիտվել է տեղումների քանակի նորմայի 40-60%-ը, իսկ Արարատյան դաշտում մինչև 20-40%-ը:

Monthly Precipitation anomalies (%) Armenia
May 2023 (1981-2010 base period)



Monthly Precipitation anomalies(%) Armenia
May 2023 (1981-2010 base period), ERA5-land




3. Երաշտի ինտենսիվության ինդեքսներ:

3.1 Բուսականության վիճակի ինդեքս (VCI)

(VCI)-ը ցույց է տալիս թե ինչպիսին է բուսականության վիճակը տվյալ ժամանակահատվածում համեմատած երկաթամկետ կտրվածքով բուսականության միջին վիճակին՝ պայմանավորված տեղանքի կլիմայական պայմաններով: VCI-ի ավելի ցածր և բարձր արժեքները ցույց են տալիս, համապատասխանաբար, բուսականության վատ և լավ պայմանները:


Ինչպես երևում է FAO կայքէջում հրապարակված մայիս ամսվա VCI-ի քարտեզից՝ Հայաստանի տարածքի զգալի մասում բուսականությունը գտնվել է նպաստավոր պայմաններում, բացառությամբ Արարատյան դաշտի, Տավուշի և Սյունիքի որոշ հովտային հատվածների:



3.2 Բուսականության նորմալացված տարբերության ինդեքս (NDVI)

Բուսականության նորմալացված տարբերության ինդեքսը (NDVI) ֆոտոսինթետիկ ակտիվ կենսազանգվածի ցուցիչ է, որը ստացվում է համեմատելով կլանված տեսանելի կարմիր լույսի և արտացոլված ինֆրակարմիր լույսի քանակը:

Ելնելով FAO պաշտոնական կայքէջում տեղադրված մայիս ամսվա NDVI-ի արդյունքներն ընդհանուր առմամբ համահունչ են VCI-ի բաշխմանը և հանրապետության շրջանների մեծ մասում գրանցել է բուսականության բարվոք պայմաններ, բացառությամբ Արարատյան դաշտի, Տավուշի և Սյունիքի որոշ հովտային հատվածների:







3.3 Գյուղատնտեսական սթրեսի ինդեքսը (ASI)

Գյուղատնտեսական սթրեսի ինդեքսը (ASI) ցուցիչ է, որով գնահատվում է գյուղատնտեսական երաշտի ինտենսիվությունը: Ինչպես երևում է մայիս ամսվա տվյալներից հանրապետության տարածքում գյուղատնտեսական թույլ երաշտ դիտվել է միայն Արարատյան դաշտի որոշ հատվածներում:

I տասնօրյակ

II տասնօրյակ


III տասնօրյակ



3.4 Օդերևութաբանական երաշտի ինտենսիվության գնահատումը

Երաշտի ինտենսիվությունը գնահատվել է Սելյանինովի հիդրոթերմիկ գործակցով՝ ըստ 38 օդերևութաբանական կայանների տվյալների: Ինչպես երևում է մայիս ամսվա ընթացքում Հայաստանի տարածքի մեծ մասում երաշտային պայմաններ չեն դիտվել, բացառություն են կազմում Արարատյան դաշտի մի քանի կայաններ, որտեղ գրանցվել է ուժեղ երաշտ:

Drought Monitoring, 21-31 May, 2023



Այսպիսով վերլուծելով փաստացի ջերմաստիճանի և տեղումների շեղումները, ինչպես նաև բուսականության վիճակի ինդեքսների արժեքները կարող ենք եզրակացնել, որ մայիս ամսին շրջանների մեծ մասում դիտված եղանակա-կլիմայական պայմանների արդյունքում Հանրապետությունում երաշտային պայմաններ չեն դիտվել, բացառությամբ Արարատյան դաշտի, Տավուշի և Սյունիքի ցածրադիր հատվածների: